ՆՈՐ-ԴԱՐ

№ 79 ԵՐՐՈՐԴ ՏԱՐԻ **Չորեքշաբթի 28 Մայիսի** **1886** **Չորեքշաբթի 28 Մայիսի** ԵՐՐՈՐԴ ՏԱՐԻ **№ 79**

Տարեկան 10 րուբլի, վեց ամիսը՝ 6 րուբլի, երեք ամիսը՝ 3 ր. 50 կ.
Հասցով 5 կոպէկ։
Բաժանորդ գրվում են Թիֆլիսում միմիայն խմբագրատանը։

Խմբագրութեան հասցէն՝ Тифлисъ. Редакція «Норъ-Даръ»
или Tiflis. Rédaction «Nor-Dar».

Խմբագրատունը բաց է ամեն օր (բացի տօն օրերից) ժամը 9-ից մինչև 2-ը։ Յայտարարութիւնները ընդունվում են ամեն լեզուներով։
Յայտարարութիւնների բառին 2 կ., երկրաչափի համար կրկնապատիկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

—

Առաջնորդող.— Մեր ընթերցողներին V։
Քրոնիկան.— Լուրեր։
Թղթակցութիւններ.— Շուշվեր. Ախալքալաք. Բաթում. Շուշի
Քաղաքական.— Ֆրանսիա։
Խառն լուրեր։
«Նոր-Դար»-ի հեռագիրներ։
«Նոր-Դար»-ի պատասխաններ։
Բանասիրական.— Բարեգործ Ֆրօլ Սիլինը։
Յայտարարութիւններ։

Յունիսի 1-ից «Նոր-Դար»-ին բաժանորդ են գրվում և վճարում են 6 րուբլի 50 կոպ.

Թիֆլիս, 27 Մայիսի 1886

ՄԵՐ ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐԻՆ

V

Եթէ այսօր ինքնուրոյն լաւ գրքոյկներ դեռ չենք կարող ունենալ և եղածներն էլ շատ սակաւաթիւ են, արդեօք թարգմանիչները ուշնինք—այս խօսքերով վերջացրինք մենք նախընթաց առաջնորդողը։

Դժբաղդաբար այսօր մեր մէջ չենք ասում լաւ, այլ միջակ թարգմանիչների թիւն անգամ աւելի փոքր է, քան ինքնուրոյն գրողների, թէպէտև այս վերջիններն էլ մատով կարելի է հաշուել։ Այս երևոյթը աւելի ցաւալի է նրա համար, որովհետև, ինչպէս նախընթաց առաջնորդողում բացատրած ենք, մեր ինքնուրոյն նոր գրականութեան առաջնորդը կարող է և պէտք է լինի—թարգմանականը։

Եւ որտեղից պէտք է ունենանք թարգմանիչները, երբ նրանք, որոնք օտար լեզուներին հմուտ, եւրոպական գրականութեան տեղեակ են, դրանք հայերէն չգիտեն, իսկ նրանք, որոնք քիչ շատ հայոց լեզուն, հին գրականութիւնը ուսումնասիրած են՝ չգիտեն մի որևէ եւրոպական լեզու, ծանօթ չեն եւրոպական գրականութեան հետ, մինչև անգամ նոր գրականական լեզուով գրելը այդպիսիների համար ծանրութիւն է. այդպիսինները կէս գրաբառ, կէս աշխարհաբառ են գրում և այդ խառնուրդը կարդալու և դրանից համ ստանալու համար պէտքէ ընթերցողի ճաշակը յատկապէս դրա համար պատրաստած լինի։

Հայոց լեզուն և գրականութիւնը օտար դպրոցներում չեն սովորեցնում, հայերէն սովորելու, հայոց գրականութիւնը ուսումնասիրելու համար պէտք է մտնել հայոց դպրոցները։ Բայց որովհետև հայ թարգմանչին հարկաւոր է և լաւ ուսումնասիրել այն եւրոպական լեզուն, որից նա թարգմանութիւն է ուզում անել, ասել է, որ հայոց դպրոցներում հայերէն սովորողները, (որոնք ուզում են թարգմանիչներ դառնալ ապագայում) պէտք է սովորեն մէկ կամ երկու եւրոպական լեզու։

Ս.րդ մեր հայոց դպրոցներից գոնէ վերջին տասնեակում աւարտողները ընդհանրապէս ոչ թէ մի որևէ եւրոպական լեզու չգիտեն, այլ, որ աւելի մեծ ցաւ և խայտառակութիւն է մեզ համար, հայերէն, ամենահասարակ հայերէն շարադրել, ուղիղ գրել չգիտեն։

Այդ բանին հազարաւոր ապացոյցներ կարող է ընթերցողը գտնել մեր և միւս խմբագրատներում։

Մեր հոգևոր դպրոցներում աւարտած և բաւականին տարիներ շարունակ ուսուցչութեամբ պարապող քանի և քանի երիտասարդներ ենք ճանաչում, որոնք առանց սխալի մի տասը տող հայերէն չեն կարող գրել, և ինչպիսի խոշոր սխալներ, իսկ ոճը, գրելու ձևը—այդ մասին չհարցնեն աւելի լաւ է։ Ի հարկէ այդպիսիները եթէ մի որև է, ասենք, հազարակ և փոքրիկ բան թարգմանելու հարկադրուած լինին, շատ մեծ նեղութիւն պիտի կրեն և թարգմանութիւնն էլ պէտք է մի ուրիշը նորից թարգմանէ, որովհետև անպէտք բան կը լինի։

Մի որև է գիրք կամ աշխատութիւն թարգմանելու համար անհրաժեշտ է երկու լեզու գիտենալ. այն լեզուն, ինչ լեզուով թարգմանում ես և այն լեզուն, որ լեզուից թարգմանում ես։ Շատ լաւ կը լինի, որ թարգմանիչը երկու լեզուին էլ հաւասար տեղեակ լինի, երկու լեզուի գրականութիւնն էլ լաւ ուսումնասիրած և երկու լեզուների հոգւոյ մէջ թափանցած լինի, բայց չեղած տեղը թարգմանիչը գոնէ պէտք է լաւ տեղեակ և վարժ լինի այն լեզուին՝ ինչ լեզուով նա թարգմանում է։

Օրինակ, թարգմանիչը ուզում է ֆրանսերէնից մի գիրք թարգմանել հայերէն։ Նա կարող է ֆրանսերէն գրել, մինչև անգամ խօսել չիմանալ, նոյն իսկ քերականական խոշոր սխալներ անել, բնաւական է, որ նա ֆրանսերէն լեզուն լաւ հասկանում է, կարդացածը լիովին ըմբռնում է, լեզուի հոգւոյ մէջ թափանցում է, լեզուի ոճերի, դարձուածքների միտքը հասկանում է, նա կարող է ֆրանսերէնից թարգմանել, եթէ միայն հայերէն լեզուն լաւ գիտէ, լեզուի ոգին իւրացրել է և գրելու մէջ էլ վարժ է։

Մի քիչ այս լեզուից, մի քիչ այն լեզուից, և ոչ մէկ լեզու հաստատ և հիմնաւորապէս չգիտցող թարգմանիչը լուսանկարի դեր է կատարում և այն էլ՝ շատ անշնորհք լուսանկարի։

Մեր գրականական լեզուն դեռ նոր և անմշակ լինելով՝ քիչ չէ օգնում այդ տեսակ թարգմանիչներին։

Վաթսունական թուականներին եթէ մեր դպրոցներում շատ բան չէին սովորեցնում, բայց մէկ բան գոնէ սովորեցնում էին։ Եթէ այն ժամանակուայ աշակերտները շատ լեզուներ չէին սովորում, բայց սովորած հայերէնը աւելի հիմնաւոր էր լինում և արդիւնքն էլ արդասաւոր։ Այն ժամանակից, որ սկսեցին մեր դպրոցներում շատ բան սովորեցնել, ամեն բան սովորեցնելու ձգտել, այսինքն ուսման պլրօգրամը առանց հաշուի ընդարձակել և ճոխացնել, այն ժամանակից էլ ընկաւ հայոց լեզուի գիտութիւնը։

Ս. Ս.

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԲԱՐԵԳՈՐԾ ՖՐՕԼ ՍԻԼԻՆԸ *)

—

(Կարամղինից)

Թող վ.իրգիլիոսները փառաբանեն Օգոստոսներին, թող պերճախօս չողոքչիները զովաբանեն նշանաւոր մարդկանց մեծահոգութիւնը, ես ուզում եմ զովել մի հասարակ գիւղացու—Ֆրօլ Սիլինին և իմ զովաբանութիւնը կ'նևրևայ նրա՝ ինձ յայտնի գործքերի նկարագրութեան մէջ։

Դեռ մինչև այսօր էլ չեմ կարող սրտղողութեամբ չլինել այն զարհուրելի տարին, որ մնում է Նիզովի բնակիչների յիշողութեան մէջ՝ քաղցած տարի անունով։ Այն ամառը, երբ երկարատև երաշտութիւնից գետնի ծածկոյթը ողողած էին միմյն գիւղացիների դառն արցունքներով, այն աչունն, երբ գիւղերում, սովորական ուրախ և զուարթ երգերի փոխարէն, թնդում էին յուսահատների լաց ու հառաչանք, որոնք միայն ամայութիւն էին տեսնում իրենց չեռմարաններում և կալերում։ Այն ձմեռը, երբ ամբողջ ընտանիքներ, թողած իրենց աները՝ ճանապարհի վերայ մուրացկանութիւն էին անում և չնայելով սաստիկ բուքին, սառնամանիքին, բայց երկնքի տակ, ամբողջ օրեր ու գիշերներ ձիւնի վերայ էին անցկացնում։

*) Երբ բարեկամներից մէկը կարդում էր նրա մօտ այս կտորը, բարի ծերունին լալիս էր և ասում. «Ես դրան արժանի չեմ, ես դրան արժանի չեմ»։

Ս. Հ.

Խնայելով ընթերցողիս փափուկ և դիւրազգաց սիրտը, ես չեմ ուզում մի առ մի նկարագրել նրան այդ ժամանակի զարհուրելի տեսարանները։ Այդ միջոցին ես ապրում էի Սիմբիրսկայի մօտ գտնուղ մի գիւղում։ Թէպէտ դեռ մանուկ էի, բայց կարողանում էի ղգալ, որպէս մեծ մարդ և չարաչար տանջվում էի մերձաւորներիս տառապանքները տեսնելով։ Մեզ հարևան գիւղերից մէկում ապրում էր (գուցէ այժմ էլ ապրում է) աչխատասէր գիւղացի Ֆրօլ Սիլինը։

Նա միշտ իւր հողն ուրիշներից աւելի լաւ էր մշակում. միշտ ուրիշներից աւելի էր ցորէն ժողովում և ժողովածն երբէք չէր ծախում, այդ պատճառով էլ նրա կալի վերայ միշտ կանգնած էին լինում մի քանի պաչարացու բարդիներ։ Եկաւ ձախողակ տարի և այդ գիւղի բոլոր բնակիչներն էլ աղքատացան, բոլորը, բացի ղպոյ Ֆրօլ Սիլինից։ Բայց միակ ղպուչութեան մէջ չէր նրա առաքինութիւնը։

Նա, փոխանակ դէպքից օգտուելով, իւր հացը թանգ գնով ծախելու և յանկարծ հարստանալու, կանչեց իւր մօտ գիւղի բնակիչներից ամենաչքաւորներին և ասաց։

«Լսեցէք, եղբայրներ, դուք այժմ հացի կարօտութիւն ունիք, իսկ ես հաց չատ ունիմ, գնանք կալը, օգնեցէք ինձ մի քանի բարդ կալսելու և վերցրէք ձեզ համար, որքան ամբողջ տարին հարկաւոր է ձեզ»։

Գիւղացիները զարմանքից բոլորովին աչքերնին ապշեցան, որովհետև թէ քաղաքներում և թէ գիւղերում մեծահոգութիւնը հազուագիւտ երևոյթ է։

Ֆրօլ Սիլինի բարեգործութեան համբաւը չրջակայքները տարածուեցաւ։ Ուրիշ բնակութիւններից չքաւորներ էին գալիս նրա մօտ և հաց խընդրում։ Բարի Ֆրօլը նրանց բոլորին էլ իրեն եղբայր էր անուանում և ոչ մէկին չէր մերժում։

—Մենք մեր բոլոր հացը չատ չուտով կը վերջացնենք, եթէ այսպէս չարունակենք բաժանել,—ասում էր նրան կինը։

—Ոչինչ. Աստուած հրամայում է խնդրողներին տալ, պատասխանում էր նա։

Երկինքը լսեց թչուառների աղօթքը և հետևեալ տարին թչուառացած գիւղացիներին առատ բերք չնորհեց։ Ֆրօլ Սիլինի պարտատու գիւղացիները ներկայանում էին իրենց բարեբարին և տալիս էին նրան այն քանակութեամբ հաց, ինչ քանակութեամբ որ վերցրել էին նրանից և դեռ աւելի էլ։

«Դու փրկեցիր մեզ և մեր որդոց սովալլուկ մահից,—ասում էին նրանք—միայն Աստուած կարող է հատուցանել քեզ քո բարեգործութեան համար. իսկ մենք չնորհակալութեամբ վերադարձնում ենք այն, ինչ որ քեզնից փոխ առանք»։

—Ինձ ոչինչ չէ հարկաւոր, սիրելի եղբայրներ,—պատասխանում էր Ֆրօլ Սիլինը.—ես նոր հաց չատ ունիմ. դուք չնորհակալ եղէք Արարչից. ոչ թէ ես, այլ Նա օգնեց ձեզ՝ ձեր կարօտութեան ժամանակ։

Ի զուր էին գիւղացիները նրան ստիպում։

—Ո՛չ եղբայրներ, ոչ. ես ձեր հացը չեմ վերցնիլ, բայց երբ դուք աւելորդ ունէք, բաժանեցէք նրանից, որ չունեցողները էլ ձեզ պէս ուրախանան։

Այդ միջոցին ես ապրում էի Սիմբիրսկայի մօտ գտնուղ մի գիւղում։ Թէպէտ դեռ մանուկ էի, բայց կարողանում էի ղգալ, որպէս մեծ մարդ և չարաչար տանջվում էի մերձաւորներիս տառապանքները տեսնելով։ Մեզ հարևան գիւղերից մէկում ապրում էր (գուցէ այժմ էլ ապրում է) աչխատասէր գիւղացի Ֆրօլ Սիլինը։

Նա միշտ իւր հողն ուրիշներից աւելի լաւ էր մշակում. միշտ ուրիշներից աւելի էր ցորէն ժողովում և ժողովածն երբէք չէր ծախում, այդ պատճառով էլ նրա կալի վերայ միշտ կանգնած էին լինում մի քանի պաչարացու բարդիներ։ Եկաւ ձախողակ տարի և այդ գիւղի բոլոր բնակիչներն էլ աղքատացան, բոլորը, բացի ղպոյ Ֆրօլ Սիլինից։ Բայց միակ ղպուչութեան մէջ չէր նրա առաքինութիւնը։

Նա, փոխանակ դէպքից օգտուելով, իւր հացը թանգ գնով ծախելու և յանկարծ հարստանալու, կանչեց իւր մօտ գիւղի բնակիչներից ամենաչքաւորներին և ասաց։

«Լսեցէք, եղբայրներ, դուք այժմ հացի կարօտութիւն ունիք, իսկ ես հաց չատ ունիմ, գնանք կալը, օգնեցէք ինձ մի քանի բարդ կալսելու և վերցրէք ձեզ համար, որքան ամբողջ տարին հարկաւոր է ձեզ»։

Գիւղացիները զարմանքից բոլորովին աչքերնին ապշեցան, որովհետև թէ քաղաքներում և թէ գիւղերում մեծահոգութիւնը հազուագիւտ երևոյթ է։

Ֆրօլ Սիլինի բարեգործութեան համբաւը չրջակայքները տարածուեցաւ։ Ուրիշ բնակութիւններից չքաւորներ էին գալիս նրա մօտ և հաց խընդրում։ Բարի Ֆրօլը նրանց բոլորին էլ իրեն եղբայր էր անուանում և ոչ մէկին չէր մերժում։

—Մենք մեր բոլոր հացը չատ չուտով կը վերջացնենք, եթէ այսպէս չարունակենք բաժանել,—ասում էր նրան կինը։

—Ոչինչ. Աստուած հրամայում է խնդրողներին տալ, պատասխանում էր նա։

Երկինքը լսեց թչուառների աղօթքը և հետևեալ տարին թչուառացած գիւղացիներին առատ բերք չնորհեց։ Ֆրօլ Սիլինի պարտատու գիւղացիները ներկայանում էին իրենց բարեբարին և տալիս էին նրան այն քանակութեամբ հաց, ինչ քանակութեամբ որ վերցրել էին նրանից և դեռ աւելի էլ։

«Դու փրկեցիր մեզ և մեր որդոց սովալլուկ մահից,—ասում էին նրանք—միայն Աստուած կարող է հատուցանել քեզ քո բարեգործութեան համար. իսկ մենք չնորհակալութեամբ վերադարձնում ենք այն, ինչ որ քեզնից փոխ առանք»։

—Ինձ ոչինչ չէ հարկաւոր, սիրելի եղբայրներ,—պատասխանում էր Ֆրօլ Սիլինը.—ես նոր հաց չատ ունիմ. դուք չնորհակալ եղէք Արարչից. ոչ թէ ես, այլ Նա օգնեց ձեզ՝ ձեր կարօտութեան ժամանակ։

Ի զուր էին գիւղացիները նրան ստիպում։

—Ո՛չ եղբայրներ, ոչ. ես ձեր հացը չեմ վերցնիլ, բայց երբ դուք աւելորդ ունէք, բաժանեցէք նրանից, որ չունեցողները էլ ձեզ պէս ուրախանան։

Այժմ էլ՝ ի հարկէ, դու. ողորմած ես քո մերձաւորին և բարձրացնում քո երկնային փառաց աստիճանը. Առանձին դէպքով, հեռու քեզանից, ես ծանօթացայ քո գործերի հետ, այն ինչ քեզանից մօտ ապրելով՝ ես ծանօթ չէի նրանց։ Երբ ոտք կը դնեմ քեզնով բարեզարդուած տեղերում, այն ժամանակ ջերմեռանդ սրտով կը ժողնամ քո խրճիթին և կ'ողջունեմ քո առաքինութեանը, իսկ եթէ քեզ կենդանի չեմ գտնիլ, կը պատուիրեմ, որ ինձ տանեն գերեզմանիդ մօտ և անզգայ հողի վերայ կը թափեմ երախտագիտութեան արցունքներ. ըստիակ քար կը գտնեմ, կը դնեմ գերեզմանիդ վերայ և իմ սեփական ձեռքով կը գրեմ այս խօսքերը՝ Այստեղ հանգչում է բարեգործ Ֆրօլ Սիլինը։

Եւրոպայի ամենահռչակաւոր ազգը հոյակապ տաճար *) նուիրեց մեծ մարդկանց, որոնք հիացնում էին մեզ իրենց ձիրքերով։

Դիմարկս ծածկած ես չեմ անցնիլ այդտեղի մօտով, բայց առանց սրտաբուղխ արցունքների ես չէի անցնիլ այն տաճարի մօտով, որ նուիրուած է մարդկութեան բարի հանճարներին—և ահա այդ տաճարում կը վայելէր կանգնել Ֆրօլ Սիլինին մի արձան։

Աղէք. Ծատուր.

*) Լոնդոնում, Վեստմինստրեան մենաստանում Անգլիական մեծանուն հեղինակների յիշատակին մահարձաններ են կանգնեցրած։

Ծանօթ հեղ.

ՀԱՅԿ-ՅԱՂ 1886-ԱՆ 79

ՂՍԻՎՂՍՅՀ

Ամեն 24-րդ օրուան փոստով

Ամսական 15-րդի վաճառ 1—2—3 թերթ

Ս. ՂԱԶԱՐԵԱՆ

Ս. ՂԱԶԱՐԵԱՆ

Ս. ՂԱԶԱՐԵԱՆ

Ս. ՂԱԶԱՐԵԱՆ

Ս. ՂԱԶԱՐԵԱՆ

Ս. ՂԱԶԱՐԵԱՆ

Ս. ՂԱԶԱՐԵԱՆ

Ս. ՂԱԶԱՐԵԱՆ

ՀԱՅԿ-ՅԱՂ

ՀԱՅԿ-ՅԱՂ

ՀԱՅԿ-ՅԱՂ

ՀԱՅԿ-ՅԱՂ

ՀԱՅԿ-ՅԱՂ

ՀԱՅԿ-ՅԱՂ

ՀԱՅԿ-ՅԱՂ

ՀԱՅԿ-ՅԱՂ

ՀԱՅԿ-ՅԱՂ

ԴՈԿՈԺՈՆՈԺ

Յուն

Յուդայական հիվանդ ի ոչ յուդայականից հիվանդանալով՝ ինքն ևս յուդայական է դառնում։ Ուրեմն՝ ոչ ոք չի ծնվում յուդայական, այլ դառնում է։ Ուրեմն՝ յուդայականությունը ոչ թե ծնվելու, այլ հիվանդանալու հարց է։

կայմի վերայ և սկսում են ածել բոլոր զանգերը։ Ամեն մի թաղ ունի իւր հրդեհաչէջները, որոնք 'ի վաղուց հետէ ուռճիկ են ստանում կառավարութիւնից, իսկ մինչև այդ ժամանակը հրդեհաչէջները հիւաներ էին, որոնք դիմամբ այրում էին տները, որ ինչ է, իրենք չատ գործ ունենան և օգտուին տանտէրերից։ Աղղարար զանգակի ձայնը լսելուն պէս, հրդեհաչէջները կարմիր դրօշներով արագութեամբ չտապում են դէպի հրդեհը, բարձրաձայն յայտնելով ամբոխին թաղի անունը, ուր պատահած է հրդեհը։

Տեղ հասնելուն պէս, նրանք անձնազոհութեամբ ձեռք են գարկում գործին և ամեն ջանք գործ են դնում հանգցնելու կրակը։ Չնայելով որ հրդեհը մի անգամից ոչնչացնում է մի քանի թաղեր և դեռ այրուած գերանները այս տեղ ու այն տեղ մխում են, ճարպնաչները չեն վհատում այդ բանից, իսկոյն տաղաւարներ են խփում աւերակ դարձած տեղում և սկսում են ծախել հրդեհից ազատած իրեղէնները, իսկ մի քանի ժամանակից յետոյ մին էլ տեսնում ես սունկի պէս երևեցան նոր և աւելի գեղեցիկ չինած տներ։ Հաշուած է, որ Տօօկիօ քաղաքը եօթ տարուայ ընթացքում համարեա թէ նորից է չինուած։ Ամեն մի ճարպնայի հրդեհ պատահած թաղում ունի իւր աղգակիցները կամ բարեկամները, որոնք այդպիսի դէպքերում իսկոյն օգնութիւն են հասցնում իրենց վնասուած ազգականին։ Հրդեհ ընկած տան տէրը ծալապատիկ նստած տան նախասենեակում, խրելով ժանգոտած սրերը գոտկի մէջ, եթէ, հին զինուոր է, վտանգ է սպառնում այն անձանց, որոնք կը համարձակուին աւազակութեան կամ յափշտակութեան նպատակով ոտք դնել նրա տան մէջ։ Նա ուշադրութեամբ զննում է ներս մտնողներին և յանձնում նրանց իւր հալալ քրտինքով դատած գոյքը։ Իսկ երբ տեսնում է, որ այլ ևս տանը անկարելի է մնալ, իսկոյն գնում է ազգականի մօտ, իսկ եթէ չունի, մի անծանօթի մօտ, ապաստանարան գրանելու Բոլորն էլ հիւրասիրում են թշուառին, 'ի նկատի ունենալով, որ վաղը կամ միւս օրը իրենք էլ կարող են ենթարկուիլ նոյն վիճակին։ Ձայն պտնացին իրեն յանձնած գոյքը չի ուրանալ և չի թագցնիլ, այլ ամենայն հաւատարմութեամբ կը վերադարձնէ տիրոջը։ Հրդեհից վնասուողին պահպանելը, նրա գոյքը իրեն վերադարձնելը մի սրբազան պարտականութիւն է ճապոնացու համար։ Այրուած տների տէրերը մնում են բարեկամների մօտ մինչև իրենց համար նոր տներ չինելը։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

«ՆՈՐ-ԴԱՐ»-Ի

ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

26 Մայիսի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. Սաւսած տեղեկութիւններից իմայվում է, որ երկաթուղու նոր բենզալի ստորագրութեան գումարը հասել է երեք միլիօն րուբլու։

ՊԵՇՏ. Երեկ այստեղ անկարգութիւններ եղան։ Կամեցան վէնիա գնացած գեներալ Եանիկու դէմ շարժումներ յարուցանել, բայց ոստիկանութիւնը և զօրքը արգելք եղան այդ բանին։ Սակայն չարդուեցան մաղազինների դռները, մի քանի հոգի վիրաւորուեցան և 30 հոգի կալանաւորուեցան։

ԱԹԷՆՔ. «Բէյսերի գործակալութեան» հեռագիրը հաղորդում է, թէ այսօր հինգ պետութիւնների ներկայացուցիչները յանձնեցին յունական կառավարութեան մի ծանուցագիր, որով յայտնում են, թէ պաշարումը վերջացած է։

ՊԱՐԻԶ. Իշխան Թերօմ Նապօլէօնը պատգամաւորներին ուղարկած նամակում բողոքում է աքսորման դէմ։ Իշխանը յոյսը դնում է ժողովրդի վերայ, որ նրա խօսքով, շուտով կը ճանաչէ իւր ճըշմարիտ բարեկամներին։

«ՆՈՐ-ԴԱՐ»-Ի ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

—

*Երևան. ***-ին։ Երևի խմբագրութեան ուղղած նամակը սխալմամբ ուրիշի հասցէին էք ուղարկել, որովհետև մայիսի 21-ին գրած մի մասնաւոր նամակի կտոր ստացանք անստորագիր։ Նամակը սկսում է «Աղնիւ Ք—ջան բառերով և խօսում է արտերից գոյացած ցորենի բաժնի վերայ։ Մենք լուրերի ենք սպասում և ոչ թէ ցորենի թէպէտև, ինչպէս ասացինք, նամակը չէ ստորագրուած, բայց ձեռքից ճանաչեցին, որ ձերը պէտք է լինի։*

Խմբագիր հրատարակիչ

ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԹՕԿՕԼԱԴ

Ս. ՍԻՈՒ ԵՒ ԸՆԿ.

(Ц. 4657)

50—15

ԹԻՓԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ, համաձայն բարձրագոյն հաստատած քաղաքային կանոնադրութեան 17 և 22 յոդ. և այս տարուայ մայիսի 5-ին կայացած քաղաքային Խորհրդի որոշման, հրաւիրում է պ. պ. տանտէրերին, որոնք ցանկանում են մասնակցել աւագչիկայ քաղաքային չորս 1887—1890 թ. տարի ժամանակով ընդհանուր ընտրութիւններին ներկայացնել անմիջապէս քաղաքային գանձարանին մինչև այս տարուայ մայիսի 31-ը իրենց կալուածքների վերայ մնացած գնահատութեան հարկի ապառիկ գրամները։ Քաղաքային վարչութիւնը այսու յայտարարում է, թէ այն անձինք, որոնք նշանակեալ ժամանակամիջոցին լիովին չեն ներկայացնիլ իրենց վերայ մնացած ապառիկները ընտրողական ցուցակների մէջ չեն նշանակուիլ։

3—1

ԳՆԱՑՔՆԵՐԻ ԵՐԹԵԿՈՒԹԻՒՆԸ

«ԹԻՓԼԻՍ» ԿԱՅԱՐԱՆՈՒՄ·

կառքեր, որոնք ճանապարհին դիւրութիւն կայարաններ ունին։

Թիֆլիսից դուրս են գալիս առաւ. 5 ժ.—25 րոպ.

ւսաւեան 8 ժամին, վլադիկաւկաս գալիս են երեկոյեան 5 ժ.—11 րոպ. և 6 ժ»—43 րոպ. մէջը։

Վլադիկաւկասից դուրս են գնում առաւսաւեան 9 ժամին։ Թիֆլիս գալիս են երեկոյեան ժամի 4 և 44 րոպ.

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱԻԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ն. ՊԱԿԷ ԵՒ ԸՆԿ.

Չորեքշաբթի, յունիսի 11-ին «ԱՐՄԵՆԻԱ» (Armenie) շոգենաւը, նաւապետ Շեօլտ (Sheult), դուրս կը գնայ Բաթումից դէպի Տրապիզոն, Օրդու, Սամսոն, Կ. Պոլիս և Մարսէյլ։

Տեղեկութիւնների համար դիմել ընկերութեան գործակալներին. Բաթումում՝ պ. ԳԱՐԱՆԻՕՆԻՆ, Թիֆլիսում՝ պ. ԲԻՆՕՒՆ, նախկին գաղերեայ Արծրունու № 103. 4—1

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Թիֆլիսի քաղաքային վարչութիւնը յայտնում է 'ի գիտութիւն ընդհանրութեան, թէ քաղաքային Խորհուրդը, 'ի նկատի ունենալով առաջիկայ չորս տարով 1887—1890 քաղաքային ընդհանուր ընտրութիւնները, 1886 թ. մայիսի 5-ի նիստում որոշեց։

1) Կազմել ընտրողական ցուցակները մինչև ներկայ տարուայ օգոստոսի 1-ը։

2) Ընդհանուր և անբաժան կալուածքում մասն ունեցողներին իրաւունք տալ յայտնելու Վարչութեանը մինչև Յուլիսի 1-ը ընդհանուր կալուածքում իրենց մասն ունենալու մասին, ցոյց տալով իրենց պատկանելի բաժինը։ Յայտարարութիւնը ներկայացնելուն պէս վարչութիւնը հաւաքած հարկը հաւասարապէս կը բաժանէ կալուածատէրերի մէջ, եթէ յայտնի է նրանց թիւը։

3) Ընտրողների հաւատարմատարները և անչափահաս ընտրողների խնամակալները պէտք է ներկայացնեն եօթ օր ընտրութիւններից առաջ քաղաքագլխին՝ առաջինները սահմանած դրոշմաւոր թղթի վերայ գրած իրենց հաւատարմագրերը (շրջաբ. Ն. Գ. Մինիստ. 1876 թ. Նոյեմբերի 26-ից, № 10,766), հաստատած նօտարիուսով, եթէ նրանց յանձնողների ստորագրութիւնները ծանօթ չեն Վարչութեանը, իսկ վերջիններիը՝ խնամակալութեան հրամանները, որով նրանք նշանակուած են խնամակալութեան կոչումի մէջ։ Ինչպէս հաւատարմատարներին, նոյնպէս և խնամակալներին իրենց խնամակալութեան ներքոյ եղողներին գրել ընտրութեան ցուցակներով մի համարի տակ, իսկ ընտրողական ժողովի նիստի օրը, այդ անձանց անունները կախել նիստի դահլիճում։

4) Վարչութեան կողմից պատրաստած ընտրողական ցուցակները, յայտնել 'ի գիտութիւն ընդհանրութեան Սեպտեմբերի 4-ին, իբրև լրացուցիչ յաւելուած լրագիրների, ուղարկել նրանց ստորագրողներին և ցուցակները հանդէս հանել խորհրդարանի դահլիճում։

5) Ընտրողական ցուցակներում եղած անկանոնաւորութեան դէմ քաղաքի բնակիչների կողմից արած նկատողութիւնները, ընդունել քաղաքային վարչութեան մէջ բացառապէս Սեպտեմբերի 7-ից մինչև 21 և յետ այնորիկ ցուցակները ներկայացնել Խորհրդի հաստատութեանը։ Քաղաքային վարչութիւնը պատիւ ունի յայտարարելու վերը գրուածները, որպէս զի այն անձինք, որոնք ընտրութեան ժամանակ չեն ունենի, իւր ժամանակին ուղարկեն Քաղ. Վարչութեանը այդ մասին իրենց նկատողութիւնները։

3—1

Իսկական կարեմքեւեաներ

„ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ՉԻՆԳԵՐԻ“ ՆԻՒ-ԵՕՐԿՈՒՄ

ԱՐԺԱՆԱՑԱԾ

աշխարհի մէջ կարեմքենաների բոլոր ցուցահանդէսներում

ԱՄԵՆԱԲԱՐՁՐ ՊԱՐԳԵՒՆԵՐԻ

Կարեւոր ընկերներ տան տիկինների և աղնիւ օդնականներ բոլոր արհեստաւորների համար

ԳՏՆՎՈՒՄ ԵՆ ՄԻՄԻԱՅՆ

Թիֆլիսում. Չինգերի ընկերութեան կենդրոնական պահեստում, Գօլովինսկի պրօսպեկտի վերայ, Միրիմանովի տան և նրա բաժանմունքների մէջ։

Բագուում. Միքայէլեան փողոցում, Միրզա Աւազեանի տ. | Բաթումում. Պօլիցիական փողոցում, Թէրզի օղլու տ.
Քութայիսում. Բուլվարի դէմ, Չերեկովի տ. | Թեհրանում. Մարշ-Մէյդանի դէմ, բուլվարի վերայ։

Ա— նրանց ճանապարհորդող գործակալները տօթ





ապրանքների ստացած
հետևեալ պատուհասները
ապրանքական դրոշմը.

ՄԻՋԻՆ ԵՒ ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԵՒՐՈՊԱՅԻ ՀԱՄԱՐ ՉԻՆԳԵՐԻ ԵՒ ԸՆԿ. ԳԼԽԱՒՈՐ ԳՈՐԾԱԿԱԼԻ ՄՕՏ

Գ. ՆԷՅԳԼԻՆԳԵՐ

ՉԻՆԳԵՐԻ ԿԱՐԵՄՔԵՆԱՆԵՐԻ ԻՍԿԱԿԱՆ ԱՐՏՕՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՀԵՏԵՒԵԱԼՆ ԵՆ

1) Մեքենաները ունին ընդարձակ գործարան և համաշխարհային հռչակ։ 2) Գները ամենաչափաւորներն են և միայն Չինգերի ընկերութեան մէջ։ 3) Ամեն տարի ծախսում է մօտ 700,000 հատ։ 4) Մեքենայի յատկութեանը չէ կարողացել նմանեցնել ոչ մի կարեմքենայի գործարան։ 5) Թէ մեքենաները և թէ նրանց օդնական գործիքները վիշտ լաւանում և կատարելագործվում են։ 6) Կարելի է ընտրել ամենամեծ քանակութեամբ և ամեն տեսակ ընտանեկան, արհեստաւորների համար մեքենաներ նաև մասնագիտական մեքենաներ զինուորական հագուստներ կարելու համար։ 7) Այս հռչակուած մեքենաները ամեն մարդ հեշտութեամբ կարող է ձեռք բերել։ Գնողները կարող են, եթէ կամենում են գրամը հետզհետէ վճարել տակաւ քանակութեամբ, այն է շաբաթով, կամ ամսով և կամ ժամանակամիջոց ստանալ գրաւականով գրամը վճարելու համար։ 8) Մեքենայի վերայ կատարելագործութիւն և հիմնաւոր սովորելը ձրի է հմուտ վարպետուհիների համար։

Չ. Գ. Չինգերի և ընկ. բոլոր պահեստներում գտնվում են մեքենաներին պատկանելի գործիքները, ինչպէս են. ասեղները, թել, մեռաքս և այլ մեքենային պատկանելի իրեղէններ ամենաչափաւոր գներով։

60—10

Дозволено цензурою. Тифлисъ, 27-го Мая 1886 г. Տպարան Մ. Դ. Ռոտինեանց և ընկ. Типографія М. Д. Ротиніанцъ и К-о Гол. пр., д. № 41